



բոյ տպագրութիւնն որոշուեցաւ միաձայն հաւանութեամբ: Յետոյ Տնօրէն ժողովոյ նորընտիր Աստուածատու Տ. Տօթթ. Փէշտի-մարտիկն արտասանեց ծառ մը, ուր յայտ-նեց թէ չը պիտի կարենայ ստանձնել իւր պաշտօնը մինչև որ ժողովը յանձն չառնու-բարեփոխել իւր նպատակը: Հայաստանի և Կիլիկիոյ ազգայնոց կրթական վիճակին հետ անտեսական վիճակն ալ բարեփոխու-թեան արհիւրով: Երկար վիճարանութիւններէ յե-տոյ, այս առաջարկը մերժուեցաւ ոմանց կողմէ իրր կանխահաւ և ոմանց կողմէ իրր հակահաւ հիմնական կանոնադրին: Փէշտի-մարտիկն էֆէնդի հրաժարական տալով իս-կոյն, ժողովը ձեռնարկեց նոր Աստուածատու մը ընտրութեան: Առաջին անգամուն, Տե-արք Յարութիւն Նորատունկեան և Մինաս Զեքալ հաւատար քուէ ստացան: քուէար-կութիւնը կրկնուելով, Տ. Զեքալ ստացաւ 18 քուէ և Տ. Նորատունկեան 14 քուէ: Ուստի, կանոնադրին տրամադրած 3/4-ի քը-ւէն գոյացնելու համար՝ հարկ եղաւ ընտ-րութիւնը յառաջիկայ նստին յետաձգել, որ տեղի պիտի ունենայ կիւրակէ:

Ահա Տ. Տօթթ. Փէշտիմարտիկն նկատու-ղութեան արժանի ծառն:

«Տեարք Երեսփոխանք: Միացեալ Ընկե-րութեանց Երեսփոխանական ժողովը իւր Տնօրէն ժողովոյն ատենապետութեան պաշ-տօնն կուզէ յանձնել ինձ: Շնորհակալ եմ յոյժ ձեր առ իս ցոյց տւած փառահա-լութեան համար:

Ներկեցք սակայն որ նոր Տնօրէն ժողովը կազմող անդամաց անուանելն պաշտօնապէս ձեզ չը ծանուցած, մի կարեւոր առաջար-կութիւն առնեմ, որոյ ընդունելութիւնն կախեալ է նախ իմ պաշտօնապարտութիւնս:

Յարուցանելու խնդիրս ամենակարեւոր է ինձ համար: Առանց շրջապատութեան և համառօտ կերպիւ հարկ է որ յայտնեմ զայն:

Առաջին անգամն է որ կը ներկայանամ ժողովոյդ: Կը սխալիմ արդեօք երբ կեն-թաղիմ թէ նոքա, որք պատուասիրեցին զիս իւրեանց քուէներով, տեղեակ էին Մի-ացեալ Ընկերութեանց նկատմամբ ունեցած կարծիացոյ: Ձեր մէջէն նոքա որք խօսակից եղել էին ինձ ընկերութեան ընթացքին վի-րայ, և նոքա որք առիթ ունեցել էին կար-գալ հրապարակաւ յայտնած ինչ ինչ զի-տողութիւնքս ընկերութեան նպատակին նկատմամբ, քաջ գիտեմ թէ ես կատարե-լապէս համոզուած եմ թէ Միացեալ Ընկե-րութիւնն իւր այժմեան ուղղութեանց մէջ մնալով, որչափ և նորա նպատակն դովելի լինի, որչափ և ժրջան լինին նորա գոր-ծողքն և հասարակութիւնն առատաձեւն, չէ կարող հզօրացնել օգնել մեր գաւառացի ազգայնոց թշուառ վիճակին:

Միացեալ Ընկերութիւնն ուրիշ ընկերու-թեանց պէս չէ որ մի մասնաւոր և սահ-մանափակ նպատակաւ աշխատի: Սա բովան-դակ Ազգին Ընկերութիւնն է, յորմէ Ազգն իրաւունք ունի մեծ բարիքներ ակրկապել, նոյն իսկ նորա համազգային լինելուն պատ-ճառաւ: Ես կը կարծեմ թէ սա առաջին օրէն ծանապարհ ելած է և կը գործէ ցարդ, առանց կանխապէս ուսումնասիրած լինելու մեր գաւառացի ազգայնոց էական և անմիջական պէտքերն:

Ըստ իս, սոսկ մտաւորական կրթութիւնն չէ՛ այս ժամուս փոքր Ասիոյ ազգայնոց ան-հրաժեշտ պէտքն, և թէ որ Միացեալ Ընկերութիւնն մի միայն իւր ներկայ ուղ-ղութեան մէջ յարատեւէ, ազգին մի մասն զեռ երկար տուններ խաբկատոր յոյսերով սնուցած պիտի լինի, և Ազգն անտեսելով մի

օր որ ընկերութիւնն չը գոյացնէր ինչ որ կը խոստանար, գուցէ մի մահաբեր ան-տարբերութիւն պիտի յղանայ նորա մասին, եթէ արդէն ընկերութեան անձուկ վիճակն այդ անտարբերութեան սկզբնաւորութիւնն յառաջ չէ եկել:

Պէտք է որ Միացեալ Ընկերութիւնն հուսկ ուրեմն ըմբռնէ այն ընդհանրացած ճշմարտութիւնն թէ ազգին մտաւորական զարգացումն նիւթական զարգացման հե-տեանքն միայն կարէ լինիլ, և թէ այս վերջինն պէտք է, ամեն բանէ յառաջ, իւր ուշադրութիւնն դրաւել:

Իմ համոզումն է թէ մենք խիստ տկար մի նեցուկ ընծայած կը լինեմք ազգայնոց՝ եթէ լոկ գպրոցներ բանամք նոցա և զա-սագրքեր յղեմք: Հայաստանի և Կիլիկիոյ հայք սովորաւոր են կամաղքատ: Նոքա տղէտ են իւրեանց աշխատութիւնն առա-ւել արդասաւոր առնելոյ մասին: Նոքա զրբէ յառաջ հացի պէտք ունին և զիտու-թեան յառաջ արհեստի:

Արդ՝ նկատելով որ Ազգն ամեն ժամանակ գործնական միջոցներով հաստատել է իւր գոյութիւնն, նկատելով որ մերօրեայ յիս-նամայ կեանքն իսկ մեծ ապացոյց է այս ազգային ձգտման, նկատելով միանգամայն որ ընկերութիւնս, չը կատարելով ինչ որ պէտք է կատարել այս հակման նպատե-լու համար, մեծ պատասխանատուութեան ներքե պիտի ընկնի ապագային առջև, ան-հրաժեշտ կը թուի ինձ որ Միացեալ Ընկե-րութիւնն բարեփոխել իւր ուղղութիւնն և իւրեան նպատակ առնու-նախ փոքր Ասիոյ հայոց անտեսական դրութիւնն բարեփո-խել:

Գիտէք արդէն թէ Ազգն, յորմէ կը սպա-սեմք ամեն նպատ, չը գիտեր ընդհանրա-պէս վերացական զաղափարներով շատանալ, և մեծաւ մասամբ այդ ուղղութիւնն պայ-ման իսկ կը գնէ իւր բարոյական և նիւ-թական աջակցութիւնն նուիրելու համար ընկերութեանս:

Երաց այս վիճակի մէջ պարտք կը հա-մարեմ ինձ յայտարարել թէ ես ևս պայ-ման կը գնեմ ձեզ ընդունիլ այս կանոնա-դրական բարեփոխումն, եթէ կուզէք որ ա-ռանց իմ համոզմունքս բռնաբարելու կա-րենամ ստանձնել Տնօրէն ժողովոյ ատենա-պետութեան պաշտօնն: Ապա թէ ոչ, ազ-գային իրական շահուց մասին ունեցած զաղափարներս պիտի մղին զիս ոչ միայն չընդունիլ այդ լոկ կրթական պաշտօնն, այլ և գտնել մի այնպիսի ընկերութիւն որ հա-մապատասխանէ փոքր Ասիոյ տեղական պի-տոյից:

Կառաջարկեմ: Բարեփոխել հիմնական կանոնադրին ծախսոն արձանագրուած տողն և ասել:

«Նպատակ. — Հայաստանի և Կիլիկիոյ հայոց անտեսական բարեփոխման նպատակ և նոցա մէջ նախնական ուսումն ծաւալել:»

(Մասին)

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինի մէջ հրատարակող ազատամիտ լրագիրները պախարակում են Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ կապած առե-տրական գաշնագրութիւնը: «National Zeitung» լրագիրը այդ գաշնագրութիւնը մի նոր ապացոյց է համարում, որ իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը կարող է միայն դժուարութիւններ ծագեցնել Գեր-մանիայի առետրական յարաբերութիւնների համար: Միւս կողմից այդ գաշնագրու-թիւնը Վիէնայի մէջ էլ անբաւականու-

թիւն պատճառեց: Աւստրո-Ունգարական լրագիրների մեծամասնութիւնը պախարա-կում է այդ գաշնագրութիւնը, ասելով, թէ նա բոլորովին չէ բարեփոխ Գերմանիայի և Աւստրիայի առետրական յարաբերու-թիւնները:

Ֆրանսիական պատգամաւորների ժողովից ընդունված ընտրողական ձևի մասին իշ-խան Բիսմարկի նկատել է, որ նա շատ ձեռն-տու կը լինի կղերական կուսակցութեանը: Բիսմարկի կարծիքով այդ ձևից ոչ մի կու-սակցութիւն այնքան օգուտ չէ կարող քա-ղել, որքան կղերականները, որովհետեւ նրանց քահանաները մուտք ունեն գրեթէ իւրաքանչիւր ընտանիքի մէջ: Բացի այդ բօնապարտականները այդ ձևի շնորհիւ մի քանի նահանգների մէջ մեծ աջողութիւն կունենան: «Ժամանակը ցոյց կը տայ, ա-սել է իշխան Բիսմարկ, թէ կղերական կու-սակցութիւնը Ֆրանսիայի մէջ որքան մեծ է:

Գերմանական պարլամենտի նիստերը մի քանի օրով յետաձգված են: Պարլամենտա-կան նոր աշխատանքները կը տեսն մինչև յունիսի վերջը, որովհետեւ մի քանի նշա-նաւոր հարցեր պէտք է քննվին:

ՍՊԱՆԻԱ

Մադրիդից լրագիրներին հաղորդում են: Սպանիական թագաւորը ներկայ էր ծար-տարապետների ժողովին, որի բացման ժա-մանակ ասաց, թէ նա պատրաստ է օգնել ժողովին նրա նպատակները իրագործելու համար և այն ամեն բանին, որ կը նպաս-տի սպանիական ժողովրդի բողոքաւորու-թեանը, լուսաւորութեանը և բարօրու-թեանը: Այդ ծառը ներկայ եղողների կող-մից մեծ համակրութեամբ ընդունվեցաւ:

Մայիսի 24-ին հանդիսով բացվեցաւ Կալ-դէրօնի արձանը: Այդ օրը թէ ձիաքարշ երկաթուղիների և թէ կառքերի շարժու-ղութիւնը ընդհատված էր, որովհետեւ փո-ղոցները ամբողջով լիքն էին: Մօտ 130,000 օտարականներ հասել էին Մադրիդ արտա-սահմանից և նահանգական քաղաքներից: Ամբողջ Մադրիդը զարդարված էր ծաղիկ-ներով և ազգային դրօշակներով:

Ասանդների ահազին բազմութիւն, գրօշակներ և պատկեր տանելով, անցաւ քաղաքից և ուղեւորվեցաւ զէպի Կալդերօ-նի արձանը: Ասանդները կանգնեցին այն հիւրանոցի առաջ, որտեղ իջել էր Փարիզի քաղաքային խորհրդարանի նախագահը և յայտնեցին նրան իրանց համակրութիւնը:

ԹԻՒՐԻՒԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալը: Յոյն-թիւրքական հարցը, իր վրա դարձ-նելով քաղաքագետների ուշադրութիւնը, մտաւորութեան տուեց թիւրք-էրեթօօրիա-կան խնդրի մի քանի կէտերը, որոնք մին-չև այժմ անվճիռ են մնացած: Այժմ Բ. Գրան առաջարկութեան համեմատ նրանք երեւի չուտով կը վճռվին: «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ ռու-սաց կառավարութիւնը այդ հարցի վերա-բերութեամբ բաւական զիջումներ է արել: Նա յանձնել է իր զիսպանիւն Վիէնայում, պ. Նովիկովին, յայտնել միւս գեղապաններին, թէ Ռուսաստանը պատրաստ է համաձայ-նել, որ փոփոխվին Թիւրքիայի և Չերթօօ-րիայի սահմանները այնպէս, ինչպէս առա-ջարկել է անգլիական կառավարութիւնը, եթէ բոլոր պետութիւնները այդ կը ցան-կանան և Թիւրքիան կը պարտաւորվի այլ

ևս սահմանական փոփոխութիւններ չը պահանջել:

Բ. Գուսը մտադիր է վերջացնել վիճելի բոլոր հարցերը, որպէս զի կարողանայ ըզ-բաղվել ներքին գործերով:

Միահադ-փաշա հասել է Կ. Պոլիս և գտնվում է պատուաւոր պահապանների հսկողութեան տակ:

Մակեդոնիայի մէջ աւազակներից գերի վերցրած անգլիացի Սօտեր ազատված է և հասել է Սալօնիկ: Գեռ յայտնի չէ, թէ նրան ազատելու համար աւազակները որ-քան փող են ստացել: Սալօնիկի շրջակա-ների մէջ թիւրք աւազակները գերի են վերցրել մի հարուստ թիւրք կալուածա-տէրի, որի ազատութեան համար պահան-ջում են 6,000 ֆունտ ստերլինգ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՅ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի: Տէրութեան հաղորդութիւն: Կայսերական տէրութեան լուրերը Բոլղարիայում պատահած փո-փոխութեան մասին, միջոց տուեց աղիտա-տօրներին պնդել իւր թէ կայսերական կա-րինէտը, հաւանութիւն չէ տալիս Բոլղա-րիայի իշխանի որոշումներին: Այդ աչքի առաջ ունեւոր, անհրաժեշտ է համարում կարինէտը յայտնել, որ իշխանը էր և է բոլղարական ազգի ընտրեալը, որ համա-կրութեամբ էր ընդունված անմոռանալի Կայսր-Ազատողի և ամբողջ Ռուսաստանի կողմից, և ծանաչված էր ամբողջ Եւրօ-պայից: Իշխանը մարմնացնում է անխզի կապ ուստ ժողովրդի բոլղարականի հետ: Կայսրը հաւատում է իշխանի բարձր զգաց-մունքներին և ազնուութեանը և չէ կաս-կածում որ նա չի յետ կանգնի իւր յանձն առած պարտաւորութիւններից առաջնոր-դել բոլղարական ազգը զարգացման ճանա-պարհով: Կայսերական տէրութիւնը հաւա-տացած է, որ իշխանը, յայտնելով անկա-րողութիւն կատարել պարտաւորութիւն-ները ներկայ ժամանակում գոյութիւն ու-նեցող պայմաններում, ձեռնարկում էր խոյ համոզմունքով, որ չէր կարող կատա-րել իր պարտքը, շարունակելով յանձն առ-նել գործերի գրութեան պատասխանատու-թիւնը, որ սպառնում էր Բոլղարիայի ապա-գային, հաւատացած է, նոյնպէս, որ իշխանը պահանջեց անհրաժեշտ իշխանութիւնը, իր պարտաւորութեան խղճմունքով կատար-ման համար: Ահա ինչ պատճառով կայսե-րական կառավարութիւնը հաւատարմով իշ-խանի խօսքերին, միաց հաւատարմութեամբ կապված նրա հետ, մերժելով աղիտատօ-րների զրգույնները, որոնք ձգտում են խզել այդ կապը, փոսնդի մէջ գնելով անարխիա յարուցանելու: Բոլղարները չը պէտք տա-րակուսեն այն զգացմունքների մասին որ Թագաւորը և ամբողջ Ռուսաստանը հաս-տատ պահում են նրանց վերաբերութեամբ, նրանք պէտք է հաւատացած լինեն, որ այդ ցանկութիւնները թելադրված են նը-րանց բարեկաւութեան մասին մշտական հոգսերով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի: Բարձրա-գոյն վարձատրութիւններ: Կովկասեան շրջ-մանի արաբիէրիայի մեծաւոր զենեկաւ Սօ-ֆիանօին շնորհված է Ալեքսանդր-Նեվսկոյ շքանշանը, տեղական զօրքերի զիտաւորին, զենեկաւ Գեղէլին՝ Սպիտակ-Արմէի շքանշա-նը, Կովկասեան զօրքի մօտ ծառայող Միլ-լիսկիին՝ Վլադիմիր երկրորդ աստիճանի պատանշանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ